

Վ Ա Ր Ք Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1964, ք. 4-6, էջ 105)

ՄԱՐԱՅ ԿՈՂՄԵՐՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԵՐ

Տօնական օրերու ուրախութիւնը հաղիւ վերջացած՝ Մաշտոց, թագաւորին հրամանով, պէտք էր սկսիլ իր առաքելութիւնը Մարաց կողմերէն, ուսուցանելով անոնց մանուկներուն հայերէն նորագիւտ տառերը, եւ անով շահելու տեղացի վայրենաբարոյ ժողովուրդը՝ քրիստոնէական կրօնքին:

Տարօրինակ է անշուշտ թագաւորին ցոյց տուած փոյթը անմիջապէս Մարաց կողմերէն սկսել տալու, երբ դեռ Վաղարշապատի վարդապետարանը չէր կազմակերպուած եւ տակաւին Մաշտոց առաքելութիւններ սկսելու որոշումը առած չէր. ինչ որ, Կորիւնի բնագրին համաձայն, յաջորդաբար տեղի պիտի ունենայ: Այս է պատճառը՝ որմէ ազդուած, Ակիւնեան ուզած է Կորիւնի բնագրին մէջ փոփոխութիւն մտցնել, Մարաց կողմերու առաքելութեան հատուածը փոխադրելով աւելի անդին՝ ուր խօսքը Աղուանից աշխարհի առաքելութեան մասին է: Այդ հատուածին մէջ յիշուած թագաւորը, որ ներկայ գիւրքին մէջ պէտք է Վառաշապուհը համարել, Ակիւնեանի տեղափոխութեամբ՝ պէտք է հասկնալ Աղուանից Արսիւղէն թագաւորը: Իսկ Մարաց կողմերը հարկ կ'ըլլայ հասկնալ Աղուանից աշխարհին մօտիկ Բաղասակի երկրին գրացութեան մէջ տեղ մը¹⁴⁴, հաւանաբար՝ Խորենացիի յիշած Գարգարցիները նոյնացնելով Մարաց կողմի բնակիչներուն հետ, ինչպէս կ'կերակայցնէ Ակիւնեան¹⁴⁵:

Պէտք է ընդունիլ որ Ակիւնեանի ըստած-

ները առաջին ընթերցումին՝ որոշ համոզում մը կը ներշնչեն: Բայց ինչպէս նախապէս տեսանք, բնագրական այս փոփոխութեան կամ լաւ եւս սկզբնական խանդարման ի նպաստ ո՛չ մէկ գրական փաստ կայ, որ արգարացնէ անոր ըրած տեղափոխութիւնները: Աշխարհագրական կերպով ալ Ակիւնեանի հաւաստումը կը մնայ տարտամ. ըստ արդոյ բանասէրին, Մարաց կողմերը պէտք է փնտռել Բաղասակի աշխարհին գրացութեան մէջ: Բայց թէ ո՞ր կողմէն գրացի կը մնայ, այդ պէտք է կուսակէ անոր ներկայացուցած Մաշտոցի ճամբորդութեանց ուղեգծէն, որուն համեմատ՝ Մարաց աշխարհը կը մնայ Աղուանից եւ Բաղասակի աշխարհներու միջեւ:

Մինչդեռ, մեր հասկցածին համաձայն, Մարաց աշխարհը պէտք է ըլլայ Գողթն գաւառի սահմանակից, ընդ մէջ Երասխ գետին եւ Ատրպատական աշխարհին. արեւմուտքէն Հեր եւ Չարեհաւան գաւառները, եւ արեւելքէն Բաղասակի աշխարհը սահմանակից ունենալով:

Այս սահմաններուն ի նպաստ կը վկայեն մեր պատմիչները. Կորիւնի վկայութեան գիտենք՝ որ երբ Մաշտոց առաջին անգամ Գողթն գնաց քարոզութեան, հեթանոս քուրմերը, զոր Կորիւն գեւերու կը համեմատէ, «Փախտեայ լինելով անկանէն ի կողմանս Մարաց»¹⁴⁶, որմէ կը

144. Ա.ԿԻՆԵԱՆ, Անդ, էջ 91:
145. Ա.ԿԻՆԵԱՆ, Անդ, էջ 92:
146. ԿՈՐԻՒՆ, Վ. Մ. էջ 40:

հետեւի թէ Մարաց կողմերը սահմանակից էին Գողթն գաւառին, առանց ենթակայ ըլլալու անոր իշխանին:

Մ. Խորենացիի սյատմութեան գիտենք որ Գողթն գաւառի հարաւային մասին մէջ, Երասխէն անդին, կը բնակէին Մարեր: Մեր պատմահայրը մէջբերելով Արտաւազը Հայոց թագաւորի մասին եղած աւանդութիւնը՝ կը գրէ. «Ի հիմնանալ Արտաշատ՝ նա անց գնաց եւ շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ, որ է ի դաշտին, որ անուանեալ կոչի Շարուրայ»: Խորենացի այս աւանդութեան վրայ հիմնուած՝ կ'ուզէ արգարացնել Մարերու մասին իր տըւած մեկնութիւնը, թէ Տիգրան յաղթելով Աթղահակի, անոր Անոյշ անունով կինը «եւ դրազուս ի սերմանէ Աթղահակայ, եւ ալ աղջկունս, հանդերձ պատանեկօք եւ ալ ըզրիւր մի բնակեցուցանէ յարեւելեայ ուղիւր մի բնակեցուցանէ յարեւելեայ Գողթոց մեծի լեռինն, մինչեւ ի սահմանս Գաթթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, Գաթթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, Գաթթան, որ են Տամբատ, Ոսկիողայ, Գաթթան (Երասխայ) դաստակերտք, յորոց մինն է ըստ խոսքի) դաստակերտք, յորոց մինն է Վարընջունիք, մինչեւ հանդէպ ամրոցին Նախաւանու, եւ դերիս աւանան զՍրամ, Նախաւանու, եւ զՍրաւանուսիս: Իսկ միւս կողմանէ գետոյն զորոք դաշտն, որոյ գլուխն Աթղանական, մինչեւ ցնոյն ինքն ամուրն Նախաւանայ»¹⁴⁷: Ահա այս տեղ նկարանաւորուած հողամասն է՝ մեզի համաձայն՝ Մարաց կողմերը, զոր Կորիւն կը յիշէ իր բնաւորաբար Մաշտոցի:

Փաւստոս Բիւղանդացի ալ կը խօսի Մարաց աշխարհի մասին, երբ կը պատմէ թէ ինչպէս Մուշեղ Մամիկոնեան ապստամբ գաւառները մէկիկ մէկիկ հպատակեցուց. Գորդուք, Երասխ, Կորդուք, Տարսիս, Մարաց աշխարհ, Արձախ, Արմորիք, Մարաց աշխարհներ¹⁴⁸: ուսնից, Կազրից, Վրաց աշխարհներ¹⁴⁹: Փաւստոսի յիշած Մարաց աշխարհը պէտք է փնտռել հարաւէն գէպի արեւելք ընթացող գաւառներու միջեւ. այսինքն՝ Նոր ցող գաւառներու միջեւ. Տարսիս եւ Արձախ Երասխ, Կորդուք, Տարսիս եւ Արձախ գաւառներու: Ինչ որ կը համապատասխանէ Երասխի հարաւային մասին՝ Աղաթանդեղոսի վերոյիշեալ հատու-

ծին մէջ ալ Մարաց աշխարհը նոյն գիւրքին վրայ է. «Բերէր առ սահմանօքն Ասորուոց, առ Նոր Շիրական երկրաւ եւ առ Կորդուք մինչեւ յամուր երկիրն Մարաց, մինչեւ առ տամբ Մահքրտան իշխանին, մինչեւ յԱտրպատական ձգէր տարածանէր գաւառարանութիւն իւր»¹⁴⁹:

Այս Մարաց ամուր աշխարհին մասին կը խօսի նաեւ Սեբէոս, յիշելով Արշակ թագաւորի կամ Վաղարշակի օրով Հայոց սահմանները. «Եւ զհիւսիսոյ կողմանէ ի լեառն մեծ Կովկաս, որ ձգի ընդ կողմանս արեւելից եւ անցանէ առ սահմանան ամուր աշխարհաւն Մարաց եւ հասանէ ի լեառն Չարասոյ եւ անցանէ առ Նոր Շիրական երկրաւ»¹⁵⁰: Երկրորդ անգամ մըն ալ Հերակլ կայսեր արշաւանքին առիթով կը յիշէ այս Մարաց երկիրը. «Ազդ լինի Երակլի կայսեր եթէ եկն Խորենամ ի Մըր-ժուին, առնու զգաւրս իւր եւ գերութիւն եւ դառնայ առ ամուր աշխարհաւն Մարաց, դայ հասանէ ի Փայտակարան»¹⁵¹:

Ակիւնեան իր տեղաւորած Մարաց կողմերը գտելու համար վերոյիշեալ վկայութիւններու տուեալներէն, կը գրէ. «Այս Մարաց կողմանք պէտք է շիտթել Մարաց ամուր աշխարհին հետ»¹⁵²: Չենք զիտեր թէ Ակիւնեան Մարաց ամուր աշխարհի մասին աշխարհագրական ինչ գիւրք կու տայ:

Բայց Երեմեան իր հրատարակած «Աշխարհացոյց»ին բացատրագրի բաժնի ին մէջ հետեւեալ տեղեկութիւնը կու տայ. «Մարաց ամուր աշխարհ. այսպէս պիտի կոչուէր Նիխորական, Մահկերտ-տուն եւ Գասն գաւառներ թերիտորիան»¹⁵³: Մեծանուն գիտնականը անշուշտ իր այս հա-

147. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ, Պատմ. Ա, 1 (էջ 124-26), Բ, 2:
148. Փ. ԲԻՒԳՆԱՆՅԱՆ, Պատմ. Ե, 2-ԺԵ:
149. Ա.ԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Պատմ. էջ 628:
150. ՍԵԲԵՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, Պատմութիւն, հրատ. Ս. Մալխասեան, Երեւան, 1939, էջ 9:
151. ՍԵԲԵՈՍ, Անդ, էջ 93:
152. Ա.ԿԻՆԵԱՆ, Վ. Մ. էջ 91:
153. ԵՐԵՄԵԱՆ ՍՏ. Հայաստանը ըստ Աշխարհացոյցի, Երեւան, 1963, էջ 65:

